ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 71

«01» նոյեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Տալ համաձայնություն

1)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի 6-րդ փողոց 2/1 շենք հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տանիքին արևային ֆոտովոլտային կայան տեղադրելու:

2)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի 01.06.01 գործառնական դասակարգման (4657) <<Կապիտալ դրամաշնորհ>> տնտեսական դասակարգման հոդվածից համաֆինանսավորման տեսքով կատարել 970000 /ինն հարյուր յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ներդրում:

2.Ներդրման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Մարմաշեն համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------

ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ ----------

ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝ ----------

ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ----------

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ ----------

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝ ----------

ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ----------

ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«01» նոյեմբերի 2019 թվական
գյուղ Մայիսյան